ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ, *Հայոց տոնածիսական մշակույթ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 399 էջ:*

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում 2016 թ. լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազգագրագետ Ս. Մկրտչյանի «Հայոց տոնածիսական մշակույթ» մեծածավալ աշխատությունը: Այն հայոց տոնածիսական համակարգի ազգաբանական և էթնոսոցիոլոգիական համալիր հետազոտություն է՝ արխաիկ, քրիստոնեական ու ժողովրդական հավատալիքների համատեքստում: Ժամանակագրական առումով աշխատանքը ներկայացնում է ընդգրկուն պատմական փուլ՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

Հեղինակն անդրադարձել է տոնին առնչվող ավանդական մշակութային գրեթե բոլոր շերտերին:

Գրքի հիմքում բազմաբնույթ և հարուստ դաշտային ազգագրական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալներն են, որոնց միջոցով հեղինակը կատարել է հայոց ավանդական ու արդի տոնական համակարգերի համեմատական վերլուծություն: Սույն աշխատության շնորհիվ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում հետազոտությունների արդյունքները, որոնք մեծ մասամբ ունեն եզակի բնույթ:

Աշխատանքի առաջին մասում («Տոները հայոց ավանդական կենցաղում») ներկայացված են հայոց մեջ առավել տարածված ավանդական տոները (Նոր տարի, Քրիստոսի Ծնունդ, Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Վարդանանց, Բարեկենդան, Զատիկ, Համբարձում, Վարդավառ, Ս. Աստվածածնի վերափոխում և Խաչվերաց): Ավանդական ծիսական այդ համալիրը դիտարկվել է տոնի հիմնական բաղադրիչների համատեքստում. այն է՝ ծագում, խորհուրդ, ժամկետ, տոմար, նախաքրիստոնեական հիմքեր, քրիստոնեական մեկնություններ, տոնական ուտեստ, հացկերույթ, տոնական մթնոլորտ, հավատալիքներ և այլն: Հատուկ ուշադրություն է դարձվել մատաղի՝ զոհաբերության և ուխտագնացության հնագույն ծեսերին և սովորույթներին:

Աշխատության երկրորդ մասում («Հայոց տոնական համակարգը վերջին հարյուրամյակում /XXդ.–XXIդ. սկիզբ/») մանրազնին հետազոտությամբ առաջին անգամ ազգագրորեն բնութագրվել են հայոց երեք հանրապետություններում շրջանառվող տոնական համակարգերը: Այստեղ, ավանդական տոնական համալիրներում կատարված փոփոխություններին զուգընթաց, ներկայացվել են նաև ազգային-պետական և միջազգային նշանակության տոները: Արխիվային հարուստ նյութերի հիման վրա տրվել են Հայաստանի Առաջին հանրապետության նորամուտ տոները (Պառլամենտի օր՝ օգոստոսի 1, Անկախության օր՝ մայիսի 28, Աշխատավորների օր՝ մայիսի 1 և այլն), որտեղ առկա էին նաև վիճահարույց որոշակի խնդիրներ:

Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է հայոց խորհրդային տոնական համակարգը՝ ավանդական և նորամուտ տոների կենցաղավարման համատեքստում, բացահայտել հայոց

տոնական համակարգի փոփոխման ընդհանուր միտումները խորհրդային և հետխորհրդային փուլերում:

Ս. Մկրտչյանին հաջողվել է կատարել ավանդական տոների խորքային վերլուծություն, բացահայտել տոնական համակարգի փոփոխությունները, վերհանել դրանց կենցաղավարման սոցիալ-մշակութային առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Նա դիտարկել է տոների տարածումը պայմանավորող առանցքային գործոնները: Հատուկ քննության առարկա են տոնի մասնակիցների սոցիալական հատկանիշները (սեռ, տարիք, մասնագիտություն, կրթություն, ընտանիք, ազգակցական համակարգ և այլն), ինչպես նաև դրանց տարածումը պայմանավորող հիմնական գործոնները (փոխայցելություն, էթնիկ ինքնագիտակցություն, պատմական հիշողություն, հայրենիքի ընկալում, միջէթնիկ փոխհարաբերություն, ներէթնիկ խմբեր և այլն):

Աշխատանքի առավելություններից են հեղինակի կազմած աղյուսակները և գծապատկերները, որոնք թվերի լեզվով ցույց են տալիս տոների տարածվածության համեմատական պատկերը գյուղական ու քաղաքային բնակավայրերում 1980-1990-ական թթ. կտրվածքով, ինչպես նաև այդ շարժընթացը հետխորհրդային ժամանակահատվածում:

Աշխատանքն ունի նաև ռուսերեն և անգլերեն ամփոփումներ, որտեղ ըստ էության ներկայացված է տոների ընդհանրական պատկերը՝ առանցքային բաղադրիչների ողջ համալիրով ու ամփոփ եզրահանգումներով:

Հարուստ է գրքի աղբյուրագիտական հենքը. այն է՝ էթնոսոցիոլոգիական, դաշտային ազգագրական, բանագիտական և արխիվային նյութեր: Շատ ներկայանալի է հատկապես օգտագործված գրականության ցանկը: Ուշագրավ է մենագրության հավելվածը, որտեղ ներկայացված են հայկական երեք հանրապետությունների պետական տոնացույցները, ավանդական տոնածիսական երգ-խաղիկները և խորհրդային-բոլշևիկյան բանահյուսությունը: Իսկ թեմատիկ և բնութագրական նկարների շարքն իրապես ամբողջացնում է հայոց տոնածիսական մշակույթին նվիրված այս աշխատությունը:

Հիրավի, Ս. Մկրտչյանի այս գիրքը մեծ ներդրում է հայ ազգագրության բնագավառում: Աշխատանքն ունի գիտագործնական կարևոր նշանակություն: Այն կարող է ուղեցույց ծառայել հայոց տոնածիսական մշակույթին նվիրված դասընթացների և միջոցառումների կազմակերպման համար սցենարներ մշակելիս:

Գիրքը նախատեսված է ազգագրագետների, սոցիոլոգների, բանագետների, մշակութաբանների, կրոնագետների, պատմաբանների, լրագրողների և լայն հասարակայնության համար: Այն հանձնարարելի է նաև հայոց տոնածիսական մշակույթով հետաքրքրված անձանց. նրանք, ձեռքի տակ ունենալով երկարատև հետազոտությունների շնորհիվ ստեղծված այս գիրքը, հնարավորինս զերծ կմնան չհիմնավորված մեկնաբանություններից և փաստերի խեղաթյուրումներից:

Կարծում եմ՝ Սամվել Մկրտչյանի հաջողության գրավականն են մասնագիտական կրթությունը, գիտարշավների հարուստ փորձը, նաև այն հանգամանքը, որ նա աշխատանքային մկրտությունը ստացել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, որտեղ էլ լրջորեն սկսեց զբաղվել հայոց տոնածիսական մշակույթի հիմնախնդիրներով:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Հ.

Պատմական գիտությունների թեկնածու